

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
YEREVAN STATE UNIVERSITY

---

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО  
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

# СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

*МАТЕРИАЛЫ ЮБИЛЕЙНОЙ НАУЧНОЙ СЕССИИ,  
ПОСВЯЩЕННОЙ 95-ЛЕТИЮ ОСНОВАНИЯ ЕГУ*

## COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

*MATERIALS OF THE SCIENTIFIC SESSION  
DEDICATED TO THE 95<sup>TH</sup> ANNIVERSARY OF YSU*

**1.6 (9)**

*Общественные науки - Social sciences*

*(Теология, востоковедение, история)*

*(Theology, Oriental studies, History)*

ЕРЕВАН - YEREVAN

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS

2015

# ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

*ԵՊՀ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 95-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ  
ՀՈՐԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆՅՈՒԹԵՐ*

## 1.6 (9)

*Հասարակական գիտություններ  
(Աստվածաբանություն, արևելագիտություն, պատմություն)*

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2015

**Հրատարակվում է**  
**ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ**  
**Издаётся по решению Ученого совета ЕГУ**  
**Published by the resolution of the Academic Council of YSU**

**Խմբագրական խորհուրդ՝**

պ. գ. դ., պրոֆ. Յ. Մարգարյան  
պ. գ. դ., պրոֆ. Յ. Աբրահամյան  
պ. գ. դ., պրոֆ. Ա. Ստեփանյան  
պ. գ. դ., պրոֆ. Յ. Ավետիսյան  
ա. գ. դ., պրոֆ. Լ. Չուգասզյան  
բ. գ. դ., պրոֆ. Գ. Ասատրյան  
պ. գ. թ., պրոֆ. Պ. Հովհաննիսյան  
բ. գ. թ., պրոֆ. Գ. Մելիքյան

պ. գ. թ., պրոֆ. Ա. Սաֆարյան  
պ. գ. թ., դոց. Յ. Գրիգորյան  
պ. գ. թ., դոց. Է. Չոհրաբյան  
պ. գ. թ., դոց. Ա. Բալյան  
պ. գ. թ., դոց. Լ. Հարությունյան  
բ. գ. թ., դոց. Ռ. Մելքոնյան  
բ. գ. թ., դոց. Վ. Ոսկանյան

**Редакционная коллегия:**

д. и. н., проф. А. Маргарян  
д. и. н., проф. Г. Абрамян  
д. и. н., проф. А. Степанян  
д. и. н., проф. А. Аветисян  
д. и. н., проф. Л. Чугасзян  
д. ф. н., проф. Г. Асатрян  
к. и. н., проф. П. Ованисян  
к. ф. н., проф. Г. Меликян

к. и. н., проф. А. Сафарян  
к. и. н., доц. О. Григорян  
к. и. н., доц. Э. Зограбян  
к. и. н., доц. А. Балян  
к. и. н., доц. Л. Арутюнян  
к. ф. н., доц. Р. Мелконян  
к. ф. н., доц. В. Восканян

**Editorial Board**

DSc, prof. H. Margaryan  
DSc, prof. H. Abrahamyan  
DSc, prof. A. Stepanyan  
DSc, prof. H. Avetisyan  
DSc, prof. L. Chugaszyan  
DSc, prof. G. Asatryan  
PhD, prof. P. Hovhannisyann  
PhD, prof. G. Melikyan

PhD, prof. A. Safaryan  
PhD, associate prof. H. Grigoryan  
PhD, associate prof. E. Zohrabyan  
PhD, associate prof. A. Balyan  
PhD, associate prof. L. Harutyunyan  
PhD, associate prof. R. Melkonyan  
PhD, associate prof. V. Voskanyan

Հրատ. պատասխանատու խմբագիր՝ **Ս. Սալխասյան**

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55-55-70, publishing@ysu.am

Հրատարակության նախապատրաստող ստորաբաժանում՝ ԵՊՀ ուսանողական գիտական ընկերություն

Հասցե՝ ք. Երևան, Ա. Մանուկյան 1, (+37460) 71-01-94, ssspуб@ysu.am, sss@ysu.am

ԵՊՀ ՌԻԳԸ հրատարակվումների կայք՝ ssspуб.yсу.am

**Հովիկ Ավանեսով**  
*ԼՂՀ, Մեսրոպ Մաշտոց համալսարան,*  
*Պատմա-իրավաբանական ֆակուլտետ, մագիստրանտ*  
Գիտ. ղեկավար՝ պ.գ.թ., դոց. Ա. Վարդանյան  
Էլ. փոստ՝ [hovik-avanesov@yandex.ru](mailto:hovik-avanesov@yandex.ru)

## **ՀԱՄՇԵՆԱԳԱՅԵՐԻ ՏՈՆԵՐՆ ՈՒ ԱՎԱՆՂՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՄԱՏԵԶՍՈՒՄ**

Համշենցի հայերի տոների ու ավանդույթների վերաբերյալ ուսումնասիրությունները հիմնականում միակողմանի են: Այս հանգամանքը բավականին «արդյունավետ» օգտագործում է Թուրքիան՝ դրանք աշխարհին ներկայացնելով որպես «թուրքական»: Կատարված ուսումնասիրությունը համեստ փորձ է այդ բացը լրացնելու գործում:

Մարդկության հասարակական կյանքը կազմված է աշխատանքային և տոնական օրերից: Յուրաքանչյուրը, ըստ էության, սահմանագիծ է, որից սկսվում է մի նոր գործ, նոր կյանք: Համշենցիների մշակութային և հասարակական կյանքում կարևոր դեր են կատարում տոներն ու ավանդույթները, որոնց արմատները գալիս են միջնադարից: Ներկայումս ապակրոնացման պատճառով մի շարք տարրեր վերացվել են<sup>1</sup>:

**Նոր տարի (ծաղկամուտ) - Կաղանդ, Սուրբ Ծնունդ:** Վաղնջական ժամանակներում հայերը Նոր տարին դիմավորել են մարտի 21-ին՝ գարնանային գիշերահավասարի օրը, ինչը պատահական չէ: Բնությունը հարություն է առնում գարնան սկզբին, այդ պատճառով հենց այդ օրն էլ հայ մարդը դարձրել է Նոր տարի և նշել ցնծալի տոնախմբությամբ, որով փառաբանել է բնության զարթոնքը, աղերսել աստվածներին, որպեսզի տարին բերքառատ լինի (այսօր էլ արիական որոշ ժողովուրդներ՝ պարսիկները, աֆղանները, տարեսկիզբ են ընդունում մարտի 21-ը):

Հայկական երկրորդ տարեգլուխը եղել է Նավասարդի 1-ը (օգոստոսի 11-ը): Ըստ ավանդության՝ Հայկ նահապետը Հայոց ձոր գավառում սպանել է բռնակալ Բելին՝ ազատություն պարգևելով իր տոհմին ու հետևորդներին: Այդ հաղթությունը ենթադրաբար տեղի է ունեցել Ք.ա. 2492 թ. օգոստոսի 11-ին: Օգոստոսյան տոնը հայերը կոչել են Նավասարդ, որ նշանակում է Նոր տարի:

Միմեոն Երևանցի կաթողիկոսի օրոք (18-րդ դ.) նոր տարվա սկիզբ է ընդունվել հունվարի 1-ը (համապատասխանեցնելով քրիստոնեական մի շարք երկրներում ընդունված տարեսկզբի հետ), թեև նույնիսկ մինչև 19-րդ դ. կեսերը հայկական շատ գավառներում (Սյունիք, Արցախ, Ուտիք) Նոր տարին շարունակում էր տոնվել օգոստոսին: Միայն 20-րդ դ. սկզբին համընդհանուր դարձավ հունվարի 1-ը տարվա սկիզբ տոնելը<sup>2</sup>:

Համշենցիների Նոր տարին (ծաղկամուտը) համընկնում է Հուլյան օրացույցի ժամանակների հետ, երբեմն տոնել են նաև Կաղանդը: Հուլյան օրացույցի Կաղանդը նախորդել է Սբ. Բարսեղ Մեծին նվիրված շաբաթին: Ժողովրդական օրացույցի համաձայն՝ հունվարի ամառին օրերը հայտնի էին որպես Սբ. Բարսեղի օրեր: Դրա համար էլ հունվարի 1-ը համընկնում է պասի օրերին, և օրենք է՝ տոնը դիմավորել ընտանեկան շրջանակում: Տոնական սեղանին դրվել են պասի կերակուրներ: Հատուկ ուշադրու-

<sup>1</sup> **Խաչատրյան ժ., Պետրոսյան Է.,** Համշենցիների տարեկան տոներն ու խաղերը (ԺԺ դարի վերջ - Ի դար), «Համշեն եւ համշենահայրերիս. գիտաժողովի նիւթեր», Երևան-Պեյրուք, 2007, էջ 223:

<sup>2</sup> «Ազգային տոներ (ավանդական ու արդիականը)», Երևան, 2002, էջ 3:

թյուն է դարձվել կերակրատեսակների թվին, որն ուներ նաև սրբազան իմաստ: Առավելությունը տրվել է յոթ թվին (յոթ տեսակի), որոնց մեջ գերակշռել են հատիկային կերակուրները և դդումի տապակած միջուկով խմորեղենը:

Նախօրոք փռում պատվիրվել է 7 տեսակի խմորեղեն՝ ընտանիքի անդամների թվով, որոնցից մեկի մեջ դրվել է բախտավորության նշան: Երեկոյան՝ մայրամուտից հետո, համշենահայերը հատուկ ընտանեկան ճաշկերույթով նշել են Նոր տարին: Սեղանին անպայման դրել են մի մեծ սափոր ջուր, 4 վառվող մոմ, որ պետք է այրվեն մինչև առավոտ: Եղևնու փոխարեն, որպես տոնական ծառ, գործածվել է երջանկություն բերող ձիթենու ճյուղ (եղևնին, որպես տոնական ծառ, սկես է օգտագործել 1900 թվից), որը զարդարվել է ճեղքված ընկույզներով, չորացած թզով ու խնձորներով: Հավանաբար ճյուղը խրել են ծիսական հացի մեջ (կանգնեցնելու նպատակով), ինչպես ընդունված էր հույների մոտ<sup>1</sup>: Նոր տարվա սեղանին պարտադիր էին չամիչով համեմված խաշած եգիպտացորենի հատիկը և եգիպտացորենի այլուրից կաթով ու բուսական յուղով պատրաստված խաշիլը (արման), որը մատուցվում էր մածոնով: Պարտադիր էին ցորեն հացը, խորոված դդումով կարկանդակը, սիսեռը, չոր մրգերը, մեղրով ընկույզը:

Ամանորի ծիսական համակարգի մեջ մտնող «առաջինի» հմայական հատկության նկատմամբ ունեցած հավատից բխող գուշակությունները վերաբերում են տնտեսական ամբողջ տարվան՝ վերջինիս ապահովության աստիճանը նախապես իմանալու կամ համապատասխան ձևով բնության ուժերի վրա ներգործելու համար: Այս բնույթի ծեսերի որոշ մասն անցել է քրիստոնեական Ամանորին: Ամենից տարածվածն ու հարատևողը որոշ ազգագրական շրջաններում «տարի» կոչվող<sup>2</sup> (այլ տեղերում կրկնի կամ առանց անունի) կլոր, ըկույզով և զանազան քաղցրեղեններով զարդարված հացի միջոցով տարվա առատությունը (բարաքյաթ) որոշելու ծիսական սովորույթն է: Ջավախքում այս սովորույթը կար՝ տանտիկինը, կաղանդի արշալույսին «տարին» տեփուրի մեջ դնելով, վրան մեղր էր լցնում և, հարսների հետ տնից դուրս գալով, գավազանով խփում էր գետնին ու երեք անգամ ասում՝ «Դովլաթ, սարն ես, ձորն ես, արի տուն» և նույն կարգով ներս գալիս, մեղրը բաժանում ամենքին, որ Նոր տարին քաղցր անցներ, իսկ «տարին» պահում էին երեկոյան գուշակության համար: «Տարի» հացը Նոր Նախիջևանում ավելի որոշակիորեն էր պահել իր հին արտաքին տեսքը, որ ուղակիորեն խոսում է դրա՝ Ամանորին նվիրված լինելու մասին: «Տարին, - գրում է Եր. Շահագիզը, - որ տարվա իսկական նշանն է, մի մեծ բուրդիչ և տափարակ հաց է, և այնպես է շինված, որ վրան պարզ կերպով երևում են մի քանի մասեր կամ ճյուղավորություն: Այդ մասերի կամ ճյուղերի թիվը լինում է 12 հատ, տարվա 12 ամիսների թվով, կամ տան մեջ եղած անդամների թվին համեմատ»<sup>3</sup>: Տարի հացը Ալաշկերտի և Մշո գաղթական գյուղերում Միջուկքին են պատրաստում, մինչև անգամ աներանք ու կերանք նշանադյալ հարսնացուներին ու փեսացուներին էլ առանձին բաժին են հանում ու մի ընծայի հետ ուղարկում նրանց<sup>4</sup>: Այլ ազգագրական շրջաններում գուշակության հացը լինում էր կլոր, չոր մրգերով և ընկույզներով զարդարված, որի մեջ մեծ մասամբ դրվում էր դրամ և այդպես թխվում: Այդ հացի միջոցով Ամանորին գուշակու-

<sup>1</sup> Ավանեսով Հ., Համշենահայերի մշակույթի ընդհանրական գծերը, «Մեսրոպ Մաշտոց համալսարան», 2013, № 6:

<sup>2</sup> Լալայան Ե., Ջավախք. նշանավոր տոներ, «Ազգագրական հանդես», № 2, գիրք Բ, Թիֆլիս, 1897, էջ 246: Շահագիզ Եր., Նոր-Նախիջևան և նոր-Նախիջևանցիք. ծեսեր ու սովորույթներ, «Ազգագրական հանդես», № 9, գիրք 9, Թիֆլիս, 1902, էջ 5:

<sup>3</sup> Նույն տեղում: Ամանորին նվիրված այդ հացով կատարվող գուշակությունն այժմ դուրս է եկել կենցաղից: Միայն ծերերն են հիշում, որ իրենց մանկության տարիներին եղել է այդ սովորույթը:

<sup>4</sup> Մխիթարեանց Աղ., Տարուայ նշանաւոր տօները, «Էմիւնեան ազգագրական ժողովածու», հ. Ա, № 1, Մոսկուա-Ալեքսանդրապօլ, 1901, էջ 261:

թյունը կատարվում էր այսպես. հացը կտրում էին ընտանիքի անդամների թվին համապատասխան (իսկ համշենցիները նաև անասուններն էին նկատի ունենում) և բաժանում յուրաքանչյուրին: Գուշակության հմայության ծեսերն ազգագրական այլ շրջաններում ընդգրկում էին այլևայլ ձևեր<sup>1</sup>:

Ըստ Բ. Թռչալայանի՝ համշենցի հայերի տանտիկինը խնձորներից մեկի մեջ թաքցրել է բախտի նշանը՝ մի մետաղադրամ, իսկ որոշ ազգագրական շրջաններում մետաղադրամի փոխարեն օգտագործվել են չորացած մրգեր, կորիզներ<sup>2</sup>: Ընտանիքի գլխավորը, խնձորը կտրելով, բաժանում էր բոլորին: Ում ընկներ նշանը, նա համարվում էր երջանիկ և հաջողակ մինչև տարվա վերջը<sup>3</sup>: Սակայն դժվար է պատկերացնել, թե ինչ մեծության պետք է լիներ այդ խնձորը, որ բավարարեր ամբողջ ընտանիքին: Ըստ դաշտային հետազոտությունների՝ խնձորով լիքը (ընտանիքի անդամների թվով) մատուցարանը դրվել է սեղանին, որոնցից մեկի մեջ տանտիրուհին տեղադրել է արծաթադրամ<sup>4</sup>: Բոլորը հույս էին փայփայում, որ դրամով խնձորը պետք է իրենց բաժին դառնա: Ըստ հավատալիքների՝ երջանկացած անձը երջանկություն և հաջողություն էր բերում ոչ միայն իր ընտանիքին, այլև այն ընտանիքին, ում տանը Նոր տարում առաջին անգամ ոտք էր դրել: Ռուսական միջավայրում նա կոչվում էր առաջին այցելու (полазник): Հայերի մեջ առաջին այցելուի բարեբերության հավատը մինչև օրս պահպանվել է: Նշանի տերն առավոտյան գնում էր աղբյուրը՝ ջրի, լցնում տան բոլոր ջրամանները: Նրա պարտադիր ու կարևոր պարտականությունը տան անասուններին ծիսական ուտեստով կերակրելն էր: Գոմ մտնելով՝ նա առաջին հերթին գոմի բոլոր անկյուններում ցորենի հատիկներ էր շաղ տալիս, ապա անասուններից յուրաքանչյուրին առանձին-առանձին կերակրում էր արմայով՝ խաշած եգիպտացորենի հատիկներով, վերջում ավելով թեթևակի խփում էր անասուններին, որ նրանք պտղաբեր լինեն: Այդ գործողության ընթացքում շնորհավորական խոսքեր արտասանելով՝ կրկնում էր նաև «ալ փարի, դուլ փարի, խեր պառ, եկ տուսիկ» անհասկանալի արտահայտությունը: Ծեսի նպատակը Նոր տարում բերքի առատության, կենդանիների պտղաբերության և մարդկանց առողջության ապահովումն էր:

Սիսիանում Նոր տարին շատ անշուք էր անցնում, որովհետև նրանք տոնում էին հայկական Նոր տարին՝ Նավասարդի 1-ը: Ոչ մի շնորհավորանք չէր լինում. երբեմն միայն հարազատները, միմյանց մոտ հավաքվելով, ուտում, խմում, ուրախանում էին<sup>5</sup>: Սիսիանի պես Գանձակում ևս Նոր տարին անշուք էր անցնում: Խանութները և արհեստանոցները չէին փակվում, ուստի և շատ քչերն էին այցելում միմյանց: Քաղաքում առավոտը վաղ պատարագ էր մատուցվում, որպեսզի տարին լավ անցնի: Այցելելով միմյանց՝ շնորհավորում էին Նոր տարին և բարեմաղթում առողջություն և հաջողություն: Այցելուներին հյուրասիրում էին սուրճ և ընկույզի ու նշի գոգինաղ: Գյուղերում խնձոր կամ կիտրոն էին միմյանց տալիս, հյուրասիրում օղի և չոր մրգեր: Մի քանի տներում դռան ճակատը զարդարում էին կարմիր թելերով, որպեսզի Նոր տարին ուրախ անցնի<sup>6</sup>: Ինչպես հայկական ազգագրական մյուս շրջաններում, այնպես էլ Արցախում բրիտանական տները ձուլվել են հեթանոսական ծեսերի հետ: Տարբեր տարիքի մարդկանց լայն մասնակցությունը տոներին արտահայտվում էր ոչ թե հոգևորականի մասնակցությամբ կատարվող պատարագներով ու թափորներով, այլ ժո-

<sup>1</sup> Օդաբաշյան Ա., Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում, Հայ ազգագրություն և բանահյուսություն, Եր., 1978, հ. 9, էջ 52-53:

<sup>2</sup> Ավանեսով Հ., Համշենահայերի տոներն ու ավանդույթները հայկական մշակույթի համատեքստում, «Համշեն», 2013, № 16:

<sup>3</sup> Առավել մանրամասն տե՛ս Բ. Թռչալայանի ֆոնդ, հ. 4, էջ 226:

<sup>4</sup> Տե՛ս Ժ. Խաչատրյանի ֆոնդ, Հայկաձոր, ասացող՝ Վարդան Ղուկասյան:

<sup>5</sup> Լալայեան Ե., Նշանաւոր տօներ, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1898, գիրք 2, № 1, էջ 249:

<sup>6</sup> Լալայեան Ե., Նշանաւոր տօներ, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1900, գիրք 2, № 6, էջ 363:

ղովորդական զվարճանքներով: Այստեղ ոչ այնքան եկեղեցին էր թափանցում համա-  
ժողովրդական անձնական կյանքի մեջ, որքան վերջինս եկեղեցու մեջ: Կային տոներ,  
որոնք ամենևին չէին նշվում եկեղեցու կողմից: Այդպիսին էր Նավասարդը, որը, ի  
տարբերություն մյուս բնակավայրերի, Արցախում տոնվում էր ոչ թե օգոստոսի 11-ին,  
այլ Նոյեմբերին, ինչը խորհրդանշում էր տնտեսական տարվա ավարտը<sup>1</sup>, ինչպես եղել  
է հնում: Այն մինչև վերջերս կայունությամբ պահպանվում էր Արցախի բոլոր գյուղե-  
րում: Ճիշտ է, Շուշիում այն մոռացության էր տրվել և փոխարինվել հունվարի 1-ի տո-  
նակատարությամբ, փոխադարձ այցելություններով ու շնորհավորանքներով, սակայն  
գյուղական բնակչության շրջանում Նավասարդի<sup>2</sup> նախօրեին շարունակում էին թխել  
զանազան թխվածքներ (կաթնահունց, քաղցր խորիզով ականջիկներ), եփել ոչխարի  
մսով ու ցորենի ձավարով կորկոտ, տան բոլոր անդամների, հատկապես՝ երեխաների  
համար գնում էին նոր շորեր ու կոշիկ (սովորույթը տարածված էր ազգագրական բու-  
լոր շրջաններում և հիմնականում պահպանվել է): Այդ տոներին նվերներ էին փոխա-  
նակում հարևաններն ու բարեկամները (այս ավանդույթը այժմ էլ պահպանվում է):  
Հատկանշական է, որ այդ օրը տասներեքը հատուկ շնորհավորում էին գյուղի տա-  
նուտերին և քահանային ու ինձոր և գինի տանում նրանց: Բակում ծառերից կարմիր  
գույնի շոր ու զանազան կարմիր լաթի կտորներ էին կախում (Մոս)<sup>3</sup>:

Ընդամենը հարյուր տարի է, ինչ հայը, ընդօրինակելով օտարներին, Ամանորը տո-  
նում է ձմեռվա կեսին: Դա արդեն սովորույթ է դառնում: Արեգակնատենչ հայը դժվա-  
րությամբ է հաշտվում Ամանորը հունվարի 1-ին նշելու սովորույթի հետ, և հենց գալիս  
է մարտի 21-ը, հայը մտաբերում է իր ամենաառաջին Ամանորը<sup>4</sup>:

Սուրբծննդյան տոնը մեծահանդես արարողությամբ և խուռներամ հավատացյալ-  
ների տոնվում է ողջ քրիստոնյա աշխարհում: Քրիստոնեության սկզբնական շրջանում  
Հիսուսի ծննդյան տոնը հայտնի էր Աստվածահայտնություն անունով: 2-րդ դ. կեսից  
Աստվածահայտնության տոնը նշվել է հունվարի 6-ին, իսկ 4-րդ դ. Հռոմի կաթոլիկ  
եկեղեցու որոշմամբ Հիսուսի ծնունդը սկսեցին տոնել դեկտեմբերի 25-ին, իսկ մկրտու-  
թյունը՝ հունվարի 6-ին: 5-րդ դ. քրիստոնյա բոլոր եկեղեցիները Ս. Ծնունդը սկսեցին

<sup>1</sup> Հայկական ավանդական այս տոնը մինչև XX դ. սկզբները, որոշ փոփոխություններով, պահպանվել էր  
ևսև Սյունիքում, Գողթնում և Պարակախյում, որտեղ Նավասարդը ժամանակային առումով տատանվում  
էր ամռան վերջերից մինչև ուշ աշուն: Չնայած մասնակի առանձնահատկություններին, Նավասարդյան ծի-  
սական արարողություններն ընդհանրական մի շարք գծեր ունեին: Դրանք հիմնականում նշվում էին աշնա-  
նը՝ համընկնելով բերքահավաքին, այգեկութին, նախրաթողին, ու միաժամանակ գյուղատնտեսական աշ-  
խատանքային պայմանադրությունների յուրօրինակ ծիսական սահմանագիծ էին: Դարաբաղիների տոնա-  
ծիսական արարողությունների նմանությունները Լոռու, Տավուշի, Սյունիքի և Գողթնի հետ պայմանավոր-  
ված է աշխարհագրական դիրքով ու միգրացիոն տեղաշարժերով: **Մկրտչյան Ս.**, Տոները դարաբաղիների  
ավանդական կենցաղում, «Լեռնային Դարաբաղի հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան»  
(միջազգային գիտաժողովի նյութեր), Երևան, 2007, էջ 397:

<sup>2</sup> **Լալայան Ե.**, Վարանդա, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1898, գիրք Գ, № 1, էջ 338-349: **Նույնի**,  
Գանձակի գավառ, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1900, գիրք 2, էջ 232-382: **Լիսիցյան Սո.**, Լեռնային  
Դարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ), ՀԱԲ, հ. 12, Երևան, 1981, էջ 67-73: **Դարյան Խ.**, Ջուս-գիւ-  
լումներ. Վարանդայի բանավոր գրականությունից, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1908, գիրք XVIII, էջ  
25-32: **Խորայեյան Ս.**, Լեռնային Դարաբաղի Փիրցամալ, Նախիջևանի և Շուշի քաղաքի ազգագրական  
նյութեր, 1970, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԱԲԱ, մաս I և II (N 355-356), 48: **Գրիգորյան Գ.**, Դարաբաղի ազգագրական  
նյութեր (գ. Սպանդարյան), 1970-1971, Երևան, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԱԲԱ, 19, մասեր I և II, տետրեր I, II, III, IV:  
**Վարդանյան Ս.**, Լեռնային Դարաբաղի ինքնավար մարզի Շուշիի շրջան, 1970 թ. հունիս-հուլիս, ՀՀ ԳԱԱ  
ՀԱԻ ԲԱԱ, տետր NNFF VII, էջ 6189: **Ղազիյան Բ.**, Դարաբաղ, Տարբեր ժամանակներ, 1973-ից սկսած, ՀՀ  
ԳԱԱ ՀԱԻ ԲԱԱ, տետր 1: **Բեգյան Ս.**, Լեռնային Ջազիր գյուղի ավանդական սովորություններ, արհեստներ  
և ծեսեր, Երևան, 1985, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԱԲԱ, մաս III, IV, 11/150: **Ղազարյան Ս.**, Գանձակի գավառի (Ելիզա-  
վետպոլի) հայկական բնակավայրերը և պատմական ճարտարապետական հուշարձանները. Գյուլումներ  
(Բարսում, Ջազիր, Խաչակապ), Երևան, 1984, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԱԲԱ, 5/116, թղթ. 4:

<sup>3</sup> «Հայ ժողովրդի ազգային տոները», խմբ. Կ. Մետրոպոլիտ, մաս Ա, Ստեփանավերտ, 2003, էջ 8-9:

<sup>4</sup> **Խաչատրյան Հ.**, Հայոց հնօրյա զվարճախոսները, Երևան, 2003, էջ 114:

տոնել դեկտեմբերի 25-ին, իսկ Հայոց եկեղեցին, հավատարիմ մնալով հնավանդ սովորությանը, շարունակում է հունվարի 6-ին տոնել Աստվածահայտնության, Ծննդյան և Մկրտության տոնը<sup>1</sup>: Համշենցի հայերը Ծննդի առաջին օրը՝ առավոտյան և երեկոյան ժամից հետո, սովորություն ունեին ժամավորներին «բաթայ» բաժանելու, որը կլոր բաղաբաժնից հաց է: Ցորենի հետ սիմիսի (եգիպտացորենի) այլուր էին խառնում, մի քիչ էլ մեղրաջուր կամ «բեքմեզ»: Քաթան բաժանում էին նաև ավագ հինգաբաթի օրը և Չատիկի ճրագալույցին<sup>2</sup>: Նոր Նախիջևանում Ծննդյան ճրագալույցի ժամերգությունը շատ կանուխ էր սկսվում, համեմատաբար շուտ էլ վերջանում: Եկեղեցում ժամավորներից շատերը վառած մոմերով կանգնում էին ժամերգության սկզբից մինչև պատարագը: Դանիելի գիրքը, ինչպես ամեն տեղ, այստեղ էլ կարդում էր երեխաներից մեկը, և Սեդրակի, Միսաքի ու Աբեղակյոզի խոսքերը, որ արտասանում են առանձին կանգնած երեք մանուկներ: «Օրհնեցեք»-ը երգում են բոլորը միասին՝ ճրագալույցի ընթրիքի համար: Բացի սովորական կերակուրներից՝ ձկնախաշուից, տապակած ու խաշած ձկնեղենից, պատրաստվում է անպատճառ և կուբայթի, որն ուտում են ձկնախաշուի հետ: Կուբայթին նման է ռուսական պիրոգին, բայց ավելի նուրբ է, ավելի ճաշակով է պատրաստվում, ավելի համադամ է, քան սովորական պիրոգը<sup>3</sup>: Արցախում այս տոնը ամենից քիչ է ենթարկվել հեթանոսական տեղական երանգավորումներին: Նախորդ օրը թխում էին անալի կարկանդակ կրկենի՝ ձեթով, այլուրով ու ընկույզով, որի մեջ նախօրոք խառնում էին սիսեռ, լոբի կամ մանր արծաթադրամ՝ ի նշան ունևորության: Այս կրկենին հանդիսավոր, ողջ ընտանիքի ներկայությամբ կտրում էին, ընդ որում՝ բաժին էին հանում նաև ընտանիքի բացակա անդամներին, կենդանիներին, նույնիսկ շանը (այս ավանդույթը տարածված էր նաև համշենցիների մոտ Նոր տարվա ժամանակ): Ում բաժին ընկներ դովլաթը, այդ տարվա ողջ ընթացքում նրա վրա էլ պետք է հիմնվեր ընտանիքի բարօրությունը: Այս սովորույթը տարածված էր հայկական ազգագրական բոլոր շրջաններում<sup>4</sup>: Տոնի գլխավոր գործողությունները միայն այդ օրերին պարտադիր խաղացվող խաղերն էին, որոնք որոշակի սցենարով, երգ ու պարով կատարվող ծիսական արարողություններ էին: Ծննդյան տոների դիմակահանդեսներն ու կերպարանափոխությամբ խաղերը կապում են տարվա առաջին օրերին տրվող հմայական նպատակադրման հետ, որով նախատեսվում էր լավ սկիզբ և բարօրություն:

**Տիրոջ մկրտությունը:** Համշենահայերը մկրտության տոնը նշել են եկեղեցական կարգով: Վաղ առավոտյան բոլորը գնացել են եկեղեցի՝ պատարագին մասնակցելու: Բանահավաքների հաղորդած տվյալների համաձայն՝ հնում մկրտության, Ջրօրհնեքի ժամանակ խաչը գցել են ծովը, իսկ լողորդները մտել են խաչը հանելու: Խաչի մկրտության արարողությունը կատարվել է եկեղեցու ավագանում: Սբ. Ծնունդի, Ջրօրհնեքի, Մկրտության տոներին պատարագից հետո եկեղեցու բակում երեք օր շարունակ տեղի են ունեցել տոնախմբություններ, մրցույթներ, խաղեր ու տոնավաճառ, որի ժամանակ երգել ու պարել են, կազմակերպել ձիարշավ<sup>5</sup>:

**Տյառնընդառաջ:** Ծննդյան տոնից 40 օր հետո տեղի է ունեցել Տյառնընդառաջը: Տների բակերում խարույկներ են վառել ու վրայից թռել: Խարույկների մարելուց հետո զգուշությամբ ծածկել են սրբազան համարվող խարույկի մոխիրը և առավոտյան գուշակություններ արել նրա վրա երևացող նկարներով: Եթե մոխրի վրայի նկարը նման էր որևէ կենդանու ոտնահետքի, հատկապես՝ այծի կճղակի, ապա տա-

<sup>1</sup> «Հայ ժողովրդի ազգային տոները», մաս Ա, էջ 10-11:

<sup>2</sup> Մուրադեանց Յ., Համշենցի հայեր, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1900, գիրք 2, № 6, էջ 157:

<sup>3</sup> Շահազիզ Եր., էջ 9, 12:

<sup>4</sup> «Հայ ժողովրդի ազգային տոները», մաս Ա, էջ 12:

<sup>5</sup> Ավանեսով Բ., Համշենահայերի տոներն ու ավանդույթները հայկական մշակույթի համատեքստում, «Համշեն», 2013, № 17:



րին բերքառատ ու հաջողակ պետք է լիներ: Տյառնընդառաջի կրակը բուժիչ է համարվել և այրել է բոլոր հիվանդությունները:

Գանձակի գավառում Նորապսակ երիտասարդները ցրտին ծառի ճյուղեր էին բերում և եկեղեցու բակում դարսում: Եթե մի Նորապսակ գլանում էր կատարել այս պարտականությունը, քահանան նրանից 40-50 կոպեկ տուգանք էր առնում: Երեկոյան ժամասացությունից հետո եկեղեցու ջահից վերցրած մոմով վառում էին խարույկը, որ դռնտառունչ էր կոչվում, և Նորապսակ գույգերը երեք անգամ պտտվում էին շուրջը ու վերջում երեքական անգամ թռչում դռնտառունչի վրայով: Երեխաները, միմի հավ գրկած, կանգնում էին խարույկի շուրջը, որպեսզի հավերը մեծ պասին հաճախ ձու ածեն, ապա մի խանձող առած վերադառնում տուն: Մի քանիսը խանձողները (ընձղակոթ) պահում էին, որ Չատիկի թաթախման երեկոյին «կաթնավի» տակ դնեին ու թաթախվեին այդ կերակրով: Տրնդեզի մոխիրը ջրի մեջ լուծում, խմեցնում էին ծննդկանին, որ հեշտությամբ ազատվի, և հիվանդին, որ առողջանա:

Արցախում Տեառնընդառաջի նախօրեին Նորապսակները եկեղեցու գավիթն էին բերում մեկական խուրճ գիհի և մեծ խարույկ անում, ընդ որում՝ հիմքում ճյուղերը դնում էին խաչաձև, իսկ վերևը՝ քառանկյունի: Ժամերգությունից հետո քահանան եկեղեցու առջև աղոթք էր կարդում: Նորապսակները բոլոր կողմերից խարույկին էին մոտեցնում եկեղեցուց բերած մոմերը և վառում խարույկը: Սովորաբար խարույկի վրայով ոչ ոք չէր թռչում. դա շատ սակավաթիվ գյուղերում միայն (Վաղուհաս) անում էին տղաները, ավելի հազվադեպ՝ աղջիկներն ու չբեր կանայք<sup>1</sup>:

**Բարեկենդան:** Ջնում Բարեկենդանի սկիզբը պայմանավորված էր գարնանային գիշերահավասարով: Հավատում էին, որ հենց այդ ժամանակահատվածում են տեղի ունենում ձմեռվա ու գարնանամուտի (ամռան) մենամարտերը: Դիցաբանական մտածողության համաձայն՝ ժողովուրդն անհրաժեշտ էր համարում իր մասնակցությամբ օգնել բնության ուժերին, որը հնարավոր էր կռիվ-մրցույթ խաղերի, հմայական գործողությունների միջամտությամբ: Համբենահայերի Բարեկենդանը տևել է երկու շաբաթ: Բոլոր օրերի համար պարտադիր են եղել ճաշկերույթի առատ սեղանը, փոխադարձ այցելությունները, շնորհավորանքներն ու նվերներ տալը: Հավատում էին, թե ինչպես անցկացնես Բարեկենդանը, այնպես էլ կշարունակվի ամբողջ տարին: Պարտադիր ծիսական կերակուրներից էին յոթան և բերախը: Յոթան պատրաստվում է հետևյալ կերպ. ցորենի այլուրից նախապես թխած երեք վարդագույն լավաշ էին վերցնում, մտցնում ջրի մեջ և դնում փափկելու: Փափկելուց հետո կտրում էին, յուրաքանչյուր կտորին հալած յուղ քսում, ապա յուղով տապակում: Բերանի համար նորից վերցնում էին լավաշները, թրջելով փափկեցնում, հետո ամեն մի կտորի մեջ դնում բրնձով, սոխով, հազարով (կաթնուկ) տապակած լցոն, լավաշը չորս կողմից ծալում իրար վրա, ապա տապակում յուղի մեջ: Բարեկենդանի ճաշկերույթներն ավարտվել են կարմիր ներկած ձվի ճաշակումով: Դա կոչվում էր բերան փակել, որովհետև մեծ պասի յոթ շաբաթը նաև ձվի պաս էր մինչև Չատիկ: Հարսանիքները հիմնականում տեղի են ունեցել Բարեկենդանին, որի երկու շաբաթվա բոլոր օրերը համարվել են տոն: Երեկոները տղամարդիկ, հավաքվելով մեկի տանը, հրավիրել են հեքիաթասացների, երաժիշտների, տիկնիկ խաղացողների (դարագթոգ), ապա երգել ու պարել: Կանայք էլ հավաքվել են առանձին: Այս ժամանակահատվածը հագեցած է եղել թատերախաղերով, որոնք հիմնականում ուղղված են եղել կենդանիների բեղմնավորմանն ու բազմացմանը, բերքի առատության ապահովման հմայական գործողություններին: Այդ օրերին ողջ գյուղը հավաքվել է կալերում՝ դաշտերում կազմակերպված գոմեշների, ցլիկների, այծերի, խոյերի կամ շների մենամարտեր նայելու: Բարեկենդանի ու հարսանեկան խաղերի մի

<sup>1</sup> «Հայ ժողովրդի ազգային տոները», մաս Ա, էջ 21-22:

տեսակ է համարվել հարս ու փեսայի ամուսնական զույգ ներկայացնելը: Սա ժողովրդական թատրոնի պարզագույն տեսակներից է: Համշենական բոլոր բնակավայրերում տարածված են եղել նաև շարժական խաղեր:

Ջավախքում սովորություն է բարեկենդան անվանել միայն Մեծ պասից առաջ եղած մի ուսուսի շաբաթը, բայց գյուղերում այդպես չէ: Նրանց բարեկենդանը ուղիղ երկու շաբաթ է տևում, սկսվում է Առաջավորաց պասից անմիջապես հետո <sup>1</sup>:

Բարեկենդանին նախիջևանցիք ասում են «Բարի կենանք» և անց են կացնում ամբողջ շաբաթը՝ մանավանդ վերջին երեք օրը միմյանց մոտ հավաքվելով, «բարիկենանք նստելով», կերուխում անելով, քաղաքի հարևաններն ընտիր սահնակներով, իսկ գյուղացիները՝ «ծուկի չանաներով» փողոցեփողոց շրջելով, զվարճանալով:

Բարեկենդանը Արցախի գյուղական ամենաուրախ ժամանակն էր: Չնայած ամենուր դեռ ձյուն էր նստած, տարբեր տարիքի մարդիկ անձանատուր էին լինում զվարճություններին, հատկապես՝ հինգշաբթիից սկսած, երբ կանայք, տղամարդիկ դադարեցնում էին աշխատանքը և երեխաների նման զվարճանում, խաղեր խաղում: Ծերուկները չէին քաշվում այս կամ այն խմբին միանալու և գնդակ խաղալու: Քնդակը կարում էին լաթի կտորներից և մեջը բուրդ կամ մազ լցնում: Խաղացողների մի խումբը աշխատում էր փայտի հարվածներով գնդակը հեռու գցել, մյուսը՝ ետ բերել <sup>2</sup>:

**Մեծ պաս:** Մեծ պասի նախօրեին տան տարեց կինը պինդ խմորից չարխ (անվիկ) էր պատրաստում, վրան 7 փետուր խրում և ուշ գիշերով կախում առաստաղից: Յուրաքանչյուր շաբաթվա վերջում հանում էր մի փետուր: Չարխ անվիկը սեզոնային, ծիսական օրացույցն է, արևի խորհրդանիշը: Առաջին շաբաթին տվել են կոկոռասի շաբաթ անունը և աշխատանքի համար անբարենպաստ համարել: Հնարավոր է նաև, որ չարխանվիկը ևս կոկոռաս-աթլորիկ է կոչվել, ինչպես Հայաստանի շատ գավառներում՝ ակլատիզ-գոգոռոզ (աթլորիկ): Ըստ Հ. Մուրադյանի՝ այդ շաբաթվա յուրաքանչյուր օր ունեցել է այդ օրը բնութագրող որոշակի հատկանիշներ.

Երկուշաբթի՝ ցեստուն - ցեցն ամբողջ տարի (եթե պաս չպահի),

Երեքշաբթի՝ սելտուն - սելտար, հեղեղի օր,

Չորեքշաբթի՝ գելտուն - գայլի օր,

Հինգշաբթի՝ քամի տուն - քամին տանիքները կտանի,

Ուրբաթ՝ մկան տուն - եթե աշխատեն, մկները կբազմանան,

Շաբաթ՝ ցավտուն - եթե աշխատեն, տանը բուն կոնեն հիվանդությունները:

Բոլոր օրերը տոն են կոչվել: Հայաստանի բոլոր գավառներում տոնի փոխարեն գործածվել է Կիրակի, հունարեն՝ *Kiriakos* (տիրակալ) բառից:

Մեծ պասն ամբողջությամբ ձմեռվա վերջին շրջանն է, Ջրիստոսի չարչարանների վերջը, և դա ամբողջությամբ արտահայտվում է չարչարանց շաբաթվա բոլոր ծեսերում: Այդ շրջանում յուրաքանչյուր շաբաթ գերդաստանական պատարագ և ճաշկերույթ է տրվել՝ ի հիշատակ հանգուցյալների: Երբեմն պատարագից հետո մատաղճաշկերույթ է տրվել մի քանի գերդաստանի կամ ամբողջ մի թաղի կողմից:

Չարչարանաց շաբաթով սկսվել է Չատկի պատրաստությունը: Հինգշաբթի եփել են ընտանիքի անդամների թվով հավկիթ, շաբաթ օրը՝ ներկել: Ձուն ներկել են հնարավորինս շատ՝ տոնական սեղանին դնելու, հարևաններին ու բարեկամներին նվիրելու և խաղալու համար: Շաբաթ օրը արևը մայր մտնելուց հետո բացել են պասը և սկսել Չատկի տոնակատարությունը: Յուրաքանչյուր ընտանիքի սեղանին դրվել է չամիչով ու բրնձով փլավ, կաթնապուր, եոթա, խաշած եգիպտացորեն, ցորենի հաց, եգիպտացորենի ալյուրից շիլլա-մամալիկա և խմորեղեն: Թաթախումն սկսվել է ձվով,

<sup>1</sup> **Լալայան Ե.**, Ջավախք, էջ 254:

<sup>2</sup> «Հայ ժողովրդի ազգային տոները», մաս Ա, էջ 27:

իսկ ծիսական կարևոր ուտելիքը համարվել է ձվածեղը: Քանի որ Սև ծովի ափին ցորեն գրեթե չէր աճում, ապա ցորենի հացը համշենցիների համար համարվել է տոնական ուտեստ<sup>1</sup>: Մեծ պասին նախիջևանցիք ասում են «Աղացք», այսինքն՝ աղուհաց, և միմյանց շնորհավորելիս ասում են՝ «Շնորհավոր ախացք»:

Ջավախքում, բարեկենդանի կերուխումից գրեթե հոգնած, երեկոյան մի անգամ կուշտ հավկիթ էին ուտում, ապա լվանում ձեռքերը, ողողում բերանը և պառկում<sup>2</sup>:

**Չատիկ:** Կիրակին հանդիսավոր պատարագի, շնորհավորանքների ու ճաշկերույթի օր էր: Բոլորի հիմնական զբաղմունքը ձվախաղերն էին: Խաղի մի տեսակը ձվերն իրար զարկելն էր. ում ձուն կոտրվում էր, նա պարտվում էր: Կոտրած ձուն հաղթողին էր: Երկրորդ տարբերակը թմբից զլորելն էր: Այդ տոնի հիմնական խաղերից էր նաև գաչուշը: Ամբողջ օրը երգում-պարում էին, ուրախանում, որ Քրիստոսը հարություն է առել: Շաբաթ օրը ժողովրդի մեծ մասը ծոմ է պահում և անհամբերությամբ սպասում ժամերգությանը: Շատերն էլ գնում են քահանայի մոտ և ստիպում նրան շուտ սկսել ժամերգությունը: Կիրակի վաղ առավոտյան, երբ, ժողովրդի կարծիքով, նահատակների վրա լույս է իջնում, գնում են գերեզմաններ՝ մոմեր վառելու: Հացից հետո քահանան շտապում է օրհնել տները: Այստեղ խոնջի վրա դրված է լինում թթիմոր, աղ, խունկ, հացահատիկ, ջուր, իսկ խոնջի տակ՝ քաթոր, հավկիթ, որ սրանք ևս օրհնվեն և շատանան: Ապա գնում են միմյանց տուն, «Քրիստոս հարեալ ի մեռելոց», «Օրհնեալ է հարութիւնը Քրիստոսի» ասում, ձեռք տալիս և համբուրվում: Շնորհավորելուց հետո հավաքվում են կտուրները և հավկիթ կռվեցնում<sup>3</sup>: Այս ամենը բնորոշ էր ազգագրական բոլոր շրջաններին, սակայն համշենցիների զատկական սեղանին լինում էր նաև տապակած խոզ, բերանում՝ ներկած ձու:

**Նոր կիրակի:** Չատիկից հետո հաջորդ կիրակին կոչվում էր Նոր կիրակի, որն ուխտի գնալու օր էր: Համշենցիք հիմնականում գնացել են Սբ. Հարություն կամ Սբ. Փրկիչ եկեղեցի՝ Տրապիզոնից 10 կմ հեռավորության վրա: Հնում սրբատեղին գտնվել է թեթևության վրա: Հետագայում տեղը հարթեցրել են: Հնարավոր է դարձել միաժամանակ մոտ 150 մարդ տեղավորել: Յուրաքանչյուր գյուղ իր տեղն է ունեցել: Հնում այստեղ հավաքվել են քաղաքային և գյուղական իշխանությունները, գավառապետները, գյուղացիները, հիվանդներն ու դյուրահավատները, և բոլոր նրանք, ովքեր երագել են ապաքինվել: Մատաղ են տվել սև եզ կամ խոյ, կարմիր աքաղաղ, որոնք պետք է հեռու պահեին բնության արհավիրքներից, հիվանդություններից, չարիքից: Եղել են նաև գոհունակության նվիրաբերումներ: Մատաղացու կենդանուն մորթելու իրավունք ունեցել է միայն նա, ով ազնիվ էր, ուներ մաքուր ձեռքեր, հարգված ու պատվավոր համբավ: Չոհին երեք անգամ սրբավայրի շուրջը պտտելուց հետո կտրել են ականջը, արյունը քսել նվիրյալի ճակատին, ձեռքերին, լեզվին, երբեմն էլ՝ գլխին, մազերին: Այդ ավանդույթն այժմ էլ տարածված է հայկական բնակավայրերում: Չոհի գլուխն ու ոտքերը թողել են սրբավայրում: Տեղի են ունեցել մրցույթներ, երգել ու պարել են կլոր պարեր: Ամենից շատ պարել են տղամարդիկ՝ իրենց արագ ու բարդ պարերը: Կանայք ու աղջիկներն առանձին են պարել: Այդ օրվա հետ կապված է եղել մերօրյա տոնավաճառների բացումը<sup>4</sup>: Հայոց ցեղասպանությունից հետո քրիստոնյա համշենցիները սփռվեցին աշխարհով մեկ, և անհնարին էր դարձել իրենց սրբավայրերն այցելելը, այդ իսկ պատճառով տոնը նշել են վերաբնակված քաղաքներում ու գյուղերում:

**Համբարձում:** Տոնը կոչվել է նաև սպիտակ ծաղկի տոն և նշվել մայիսին: Սրբատեղը Լուսաղբյուրն էր՝ Տրապիզոնից 3 ժամվա հեռավորության վրա: Երիտասարդ

<sup>1</sup> Խաչատրյան ժ., Պետրոսյան Է.:

<sup>2</sup> Լալայան Ե., Ջավախք, էջ 264-265:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 272-273:

աղջիկները, բարձրանալով լեռները, ծաղիկ ու ջուր են հավաքել, մեջը գցել իրենց Նշանները (մատանի, ականջօղ, կրծքագարդ, կոճակ, մետաղադրամ) և գուշակություններ արել: Վիճակ հանողը բախտի մեր, իսկ ամանը բախտաման է կոչվել: Հավաքվել են ինձորենու տակ, երգել մի քառյակ և հանել Նշան, որին բախտ են ասել: Գուշակությունից հետո ջուրը չեն թափել, այլ քսել են գլխներին, որ մազերն առատ լինեն:

Համբարձման ծիսական կերակուրը կաթնապուրն էր: Այդ պատճառով համբարձմանը տվել են նաև կաթ, ուտիչ, օր անունը: Օրվա վերաբերյալ կա մի ավանդություն. Համբարձման ժամանակ գերեզմանաքարն ուզեցել է Զրիստոսի հետ երկինք բարձրանալ: Զրիստոսը բռունցքով քարը հրել է ցած, և քարն անշարժ մնացել է տեղում: Զրիստոսը համբարձվել է 9 օր և հյուրընկալվել հրեշտակներից մեկի կողմից: Այդ երևույթի համար համշենցիք 9 հրեշտակների պաս են պահում<sup>1</sup>:

**Վարդավառ:** Վարդավառը կամ Զրիստոսի Պայծառակերպությունը Հայ Առաքելական եկեղեցու 5 տաղավար տոներից է: Նշվում է Սուրբ Չատիկից 98 օր հետո՝ հունիսի 28-ից օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում: Տոնի պատմությունը գալիս է դեռևս հեթանոսական ժամանակներից: Վարդավառի տոնը կապվում էր հայկական դիցարանի ջրի, սիրո, պտղաբերության ու գեղեցկության աստվածուհի Աստղիկի հետ: Վարդավառի տոնը նշվում էր ժողովրդական մեծ հանդիսություններով: Աստղիկին վարդեր էին նվիրում, աղավիհներ բաց թողնում և միմյանց վրա ջուր ցողում<sup>2</sup>:

Պիրոն, անդրադառնալով համշենցիների կողմից Վարդավառ տոնելու ավանդույթին, գրում է. «Վարդավառին նրանք մատաղ են անում, գնում են ուխտ իրենց աւերակ վանքերը և եկեղեցիները: Ենիս-ուլ իսլամը հրամայել էր, որ նրանք՝ Հեմշինի բնակիչները՝ Վարդավառը չտօնեն, բայց նրանք ասել են, որ, եթե նրանց թնդանօթի բերանն անգամ կապելու լինեն, նրանք պետք է տօնեն»<sup>3</sup>:

Արցախում առանձնահատուկ երևույթ էր Վարդավառի ծիսահամալիրում Համբարձման-վիճակի և մասամբ Նուրիհի առկայությունը, չնայած դրանցից յուրաքանչյուրը կենցաղում պահպանում էր ժամկետային և արարողակարգային ինքնուրույն դիմագիծը<sup>4</sup>: Ղարաբաղյան Նուրիհը («Գողի», «Ճոլի») կատարում էր ինչպես անձրևաբեր, այնպես էլ վնասաբեր տեղումները կանխարգելող գործառույթ<sup>5</sup>:

Այսպիսով, համշենցիների տոներն ու ավանդույթները դիտարկելով հայկական մշակույթի համատեքստում՝ նպատակ ենք ունեցել ազգագրական տեսանկյունից հերքելու թուրք «գիտնականների» կողմից շրջանառության մեջ դրված համշենցիների «թուրքական արմատներ» ունենալու ապագիտական թեզը:

<sup>1</sup> **Սուրադեանց Յ.**, էջ 158:

<sup>2</sup> «Վարդավառի ավանդույթը Զավոնում», թարգմ. Ա. Զարտաշյանի, «Ձայն Համշենական», 2013, № 7-8:

<sup>3</sup> **Պիրո**, Տաճկացած հայեր, «Նոր-դար» թերթ, Թիֆլիս, 1893, դեկտեմբերի 21 (№ 227):

<sup>4</sup> Տավուշում, Համշենում, Պոտոսում և շատ այլ բնակավայրերում Վարդավառը ևս համարվում էր վիճակ բացելու օր, որը երբեմն ավելի հանդիսավորությամբ էր կատարվում, քան Համբարձման տոնին: Առանձին գավառներում Վարդավառին նաև խարույկ էին վառում, որոնց շուրջը կատարվող արարողությունները նման էին Տերընդեգի կրակավառության հանդիսություններին (տե՛ս **Թուլաթյան Բ.**, Ազգագրական նյութեր համշենահայերի և պոնտահայերի սոցիալական հարաբերությունների մասին, Երևան, ՀԱԻ ԱԲԱ, մաս 6-րդ, 230, տետր 3/30, էջ 438: **Հալաշյան Գ.**, Դերսիմի ազգագրական նյութերը, 1960, Երևան, ՀԱԻ ԱԲԱ, մաս 5, 399, № 5 ր, էջ 1525):

<sup>5</sup> **Մկրտչյան Ա.**, էջ 397, 398: **Հայրապետյան Թ.**, Անձրևաբեր և անձրևախափան ծեսերի երկհակադիր ընկալումների շուրջ, «ՊԲՀ», 2004, № 3, էջ 217-227:

Հոփիկ Ավանեսով

**ՀԱՄՇԵՆԱՀԱՅԵՐԻ ՏՈՆԵՐՆ ՈՒ ԱՎԱՆՏՐՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ  
ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

*Բանալի բառեր՝ թուրք պատմաբանների թեզը համշենցի հայերի՝ թուրքական  
Էթնոսին պատկանելու վերաբերյալ, համշենահայերի տոներն ու  
ավանդույթները հայկական մշակույթի համատեքստում*

Հոդվածում լուսաբանվում են համշենահայերի տոներն ու ավանդույթները հայկական մշակույթի համատեքստում, նշվում նմանություններն ու տարբերությունները: Քննադատվում է համշենցիների՝ թուրքական էթնոսին պատկանելու վերաբերյալ թուրք պատմաբանների թեզը:

Овик Аванесов

**ПРАЗДНИКИ И ТРАДИЦИИ АМШЕНСКИХ АРМЯН  
В КОНТЕКСТЕ АРМЯНСКОЙ КУЛЬТУРЫ**

*Ключевые слова: тезис турецких историков о принадлежности амшенских армян к турецкому этносу, праздники и обычаи амшенских армян в контексте армянской культуры*

В статье освещены праздники и традиции амшенских армян в контексте армянской культуры, отмечены сходства и различия с армянскими национальными праздниками и традициями. Критикуется тезис турецких историков о принадлежности амшенцев к турецкому этносу.

Hovik Avanesov

**FESTIVALS AND TRADITIONS OF THE HEMSHIN ARMENIANS  
IN THE CONTEXT OF THE ARMENIAN CULTURE**

*Keywords: thesis of Turkish historians on affiliation of Hemshin Armenians to the Turkish ethnos, holidays and habits of Hemshin Armenians in the context of Armenian culture*

The article examines the festivals and traditions of the Hemshin Armenians in the context of Armenian culture, scrutinizing the similarities and differences. The author criticizes the thesis of the Hemshin Armenians' Turkic ethnicity introduced by the Turkish scholars.